

ՅՈՒՅԱԿ ՀԱՅԵՐԵՆ ԶԵՌԱԳՐԱՑ ՀՍՏ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԹԱՐԱԳՐԱՑԻ

Հայկական ՍՍՀ պետական պատմական թանգարանի գրքային ֆոնդում,
բազմաթիվ հնատիպ գրքերի հետ, առկա են նաև մի քանի ձեռագրեր—ժե դ.
առաջին ցառորդի մի Ավետարան (№ 692), 1734 թ. մի Տոնացույց (№ 592),
ԺՂ դ. առաջին կեսի մի Ժողովածու (№ 741), 1850 թ. մի Բառփիռք (№ 693) և
հնատիպ գրքի վերանորոգության 1675 թ. մի Հիշատակարան (№ 438), ըն-
դամենք հինգ միավոր: Դրանք թեև 30-ական թվականներից ի վեր գտնվում
են թանգարանի ֆոնդերում, սակայն ցարդ դուրս են մնացել բանասերների
տեսադաշտից:

Ստորև տալիս ենք դրանց նկարագրությունը:

Օ. Ս. ԵԳԱՆՅԱՆ

ԱՎԵՏԱՐԱՆ

(Պատմության թանգարան, № 692)

ԺԵ—XV

Գրիչ, ծաղկող և ստացող՝ Մկրտիչ:

Թեր՝ 288, շգրված՝ 1ա, 22ա, 24ա, 39ա, 84ա—85ա, 136թ—137ա, 185ա,
223ա, 242ա, 246ա: Պրակ՝ Ա.-իե×12 (ԺԴ, ի—իթ 10, ԺԹ 8): Նյութ՝ թուղթ,
բամբակյա, Մեծուրյուն՝ 18,5×14: Դրույտն՝ երկայում: Գիր՝ բոլորգիր:
Տող՝ 21: Կազմ՝ դրոշմազարդ շագանակագույն կաշի՝ դռնակով, Ա փեղկի կենտ-
րոնում արծաթյա փոքրիկ խաչ, որի կենտրոնում եղել է ակ (այժմ ընկած),
միջուկը՝ տախտակ, աստաղը՝ կարմիր կտավ: Պահպանակ՝ 2 թերթ շգրված
թուղթ սկզբից:

Պատառիկ-պահպանակ—2(Ա.-Բ)+2(Գ.-Դ), ստացված 1-ական ամբողջա-
կան թերթերի ընդլայնակի երկտակումից: Մաղաղաթ, երկայում, ուղղագիծ եր-
կաթագիր, մասն ինչ-որ ճառի:

Մանրանկարչուրյուն—տերունական նկարներ՝ 4ա Փախուստ լՇպիլտոս,
5ա Ծնունդ և երկրապութիւն մոգուց, 7ա «Ննջումն Յովսեփու», 9ա «Մկրտիւ-
թիւնն է Քրիստոսի Աստուծոյ մերոյ», 81թ «Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի», 82ա «Աւերումն դժոխոց», 110թ «Պայծառակերպութիւնն է Քրիս-
տոսի», 140թ Յայտնութիւն, 146 թ Քառասնօրեայ գալուստն ի տաճար, 217թ
«Համբարձումն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի», 254ա «Ղաղարու Յարու-
թիւնն է», 256թ «Մաղկաղարդ», 261թ «Պատարագելն Քրիստոսի Աստուծոյ մե-
րոյ», 264ա «Հոգույն Մրրոյ իջումն ի վերնատանն» ի սուրբ յառաքեալսն», 271թ
«Ըմբռնումն Տեառն մեր Յիսուսի Քրիստոսի», 276թ «Եսաշելութիւն», 278թ «Թա-
ղումն Քրիստոսի Աստուծոյ»: Ավետարանիշներ՝ 1թ Մատթէոս, 85թ «Մարկոս

աւետարանիչն է», 137ր «Ղուկաս աւելտարանիշ], 218 ր «Յովհաննէս աւելտարանիշ], Պոխորոն»: Կիսախորան՝ 2ա, 86ա, 138ա, 219ա: Լուսանցազարդ՝ բուսական, տաճար, տերունական նկարներ (81ա Մարիամ Մագդաղենացի): Զարդագիր՝ հանգուցագիր, թոշնագիր և ավետառանիշների խորհրդանիշերով: Դույներ՝ կարմիր, կապույտ, զեղին, շագանակի, ոսկի:

Վիճակ՝ բավարար. խոնավությունից ստորին լուսանցքները գունափոխված և լուսանցաեղբերը բամբակալած, վերջին մամուլի ստորին արտաքին անկյունը փոտած և քայլայիված՝ պատառիկ-պահպանակը վնասված և գիրը գունաթափ: Կազմի և վեղկի ստորին մասը սև կաշվով XIX դարում նորոգված:

Մանոր. Վերջում I թերթ երրայեցերեն գրությամբ մազաղաթյա պատառիկ, որ պատահարար է դրված ձեռագրի մեջ:

ԲՈՎԱՆԴԱԿԱՌԵՑՈՒՅՆ

1. 2ա—83ր Աւետարան բառ Մատրէի:
2. 86ա—136ա Աւետարան բառ Մարկոսի:
3. 138ա—218ա Աւետարան բառ Ղուկասու:
4. 219ա—284ա Աւետարան բառ Յովինանու:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

136ա Երես ի զետին դնեմ և աղաշեմ զձեղ՝ յիշել զժնաւղսն իմ, զհայրն իմ՝ զեւագէլ և զմային իմ՝ զֆովլադ, և Աստուած զձեղ յիշէ. ամէնու (նկարների շրջանակների կապույտ կողերի վրա՝ սպիտակաղեղով).
 110ր Զստացօղ և զնկարօղ Մկրտիչ աղաշեմ յիշել:
 261ր Զնկառօղ և ստացօղ մեղապարտ Մկրտիչ աղաշեմ յիշել:
 276ր Զստացյօղ և զնկարօղ Մկրտիչ:
 278ր Զստացօղ սուրբ Աւետարանիս յիշել:

Օրուելի և Դովլաթի սրդի Մկրտիչը եղել է Գրիգոր Տաթևացու աշակերտներից: 1407—1432 թթ. Տաթևացու, Մեծութիւն և Հուսկան որդվու վանքերում, ինչպես և Առճեշում ընդօրինակված մի շաբթ ձեռագրերում Մկրտիչը հիշատակվում է ոռպես թուղթ կոկող, զոիշ կամ ստացող (տե՛ս Լ. Ս. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, Երևան, 1955, էջ 743, № 16): Այսուղ հայտնի է դաւնում, որ նա եղել է նաև նկարիչ:

ՀԵՏԱԳԱՅԻ

284ա Դարձեալ յիշեցէր զստացաղն սուրբ Աւետարանիս՝ ոյսոցայ Յովինէս (տողամէջ՝ «զորդիսնն Բատոն»), որ բարացաւ զսայ ի հալալ վաստակոց իրոց, և ծնողս իսր՝ զիսօջայ Միհայէլն, և զմայրն իսր՝ զՄաղսումն, և զզուր արեան մեղծաւորքն, և եղիո (տողամէջ «ի Բաղէլ»), ի դուռն նինիխուրանին՝ յիշատակ իսր՝ ծնողացն: Թէ ոք յանդզնի կամ ծախէ կամ գրաւէ, զպատիժն Յուլիդաին առցէ և զնաշուածոց. ամէնու Թիմին ԶԾԴ (1505):

284ր Ես՝ աստուածասէր և բարեմիտ Ղալարէկիս ետու նորոգել զսուրբ Աւետարանս՝ յիշատակ հոգոյ իմոյ և ծնողացն, հօրն՝ Ամիրշանին և մօրն՝ Մ/ա/րգ/ա/րտին, և որդոցն՝ Աշխանին, Ամիրաղին, որ ի պարսիցն սրա-

հողմով եղեալ կատարեցաւ առ Աստուած, և դստերացն՝ Գուզալաղային, Սալամոն, յիշեցէք ի Քրիստոս, և Աստուած ողորմի ասացէք, Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն:

285ա Դարձեալ յիշեցէք [ի] Քրիստոս զբարէմիտ տանուտէրն Շահենն և զկողակիցն՝ զերարն, և որդուն՝ Մայատին, Գրիգորին, Մինասին, Գիլաֆին, Միքակին, և դստերացն՝ Ռոփիդին, Ասլմատին, և ծնողացն՝ Դիլաֆին, Սոլքանին, որ պատճառ եղեաւ զՍուրբ Գէօրգն իւր յալալ վաստակուին և ձեռաց ամակով շինեաց ի Զնիի գեղն և ետ յիշատակ ի զուսն Սուրբ Գէօրգայ զսուրբ Աւետարանս, սուրբ նիշան մի, Բ(2) խաչ՝ անջինն յիշատակ Հոգուն իւրոյ Եւ որ հանգիպի, լի բերանով և բոլորոյ սրտիւ Աստուած ողորմի ասացէք, և Աստուած [զձեզ ողորմեսցի իւր միուսանոցամ լգալստյեան. ամէն: Եղիցի, Եղիցի: [Թվին Ռ]ՃԾ (1701):

2

ՏՈՆԱՑՈՅՑ

(Պատմության բանգարան, № 592)

ԽՃԶԳ — 1734

Թերը՝ 4+էջ 1—292+4. շգրված՝ սկզբի և վերջի շէջակալված 4-ական թէրթէրը, Պրակ՝ 1×4+Ա—ԺԲ×8+1×4, Ելուր՝ թուղթ, Մեծություն՝ 15,5×10, Գրություն՝ միասյուն: Գիր՝ նոտրդիր: Տող՝ 25, Կազմ՝ զրոշմագարդ շագանակաղուցն կաշի, միջուկը՝ սովորաթուղթ, աստառը՝ թուղթ:

Վիճակ՝ բավարար:

Սանոր, դրված 1664 (—1665)-ին Ամստերդամում Հրատարակված Շարակնոցի սկզբունք:

ԲՈՎՈՆԻԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ 1 Տօնացոյց նայոց սովորակառաց—Տօնացոյց այս շարադրեցաւ բառ կարգի տարեգրոցն՝ վասն բառնալոյ զամենայն գժուարութիւն...

Հաջորդում է շարժական տոների աղյուսակը՝ ԽՃԶԳ-ԽՄՂԲ (1734—1843): Հետևածես ԽՃԶԳ (1734)-ն այսոք է Համարել զրչության թվականը:

3

ԺՈՂՈՎԱԾՈՒԻ

(Պատմության բանգարան, № 741)

ԺԸ—XVIII

Թերը՝ 72. շգրված՝ 1ր, 72ար: Պրակ՝ Ա.-2×12: Ելուր՝ թուղթ: Մեծություն՝ 9×13,3: Գրություն՝ միասյուն: Գիր՝ նոտրդիր: Տող՝ 17: Կազմ՝ սև լաթ, միշուկը՝ սովորաթուղթ, աստառը՝ թուղթ, Պահպանակ՝ թուղթ 1+3, շգրված:

Վիճակ՝ բավարար:

ԲԱՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. 1ա-41ր [Պաղտասար Գյոիր]: Գրգուկս Շահամէտ. ունի յինքեան բազում ինչ հաւաքեցեալ աստի և անտի յաղազը օգտի որոց միտս ունին և լսելիս: Տպեցեալ կարողութեամբ Աստուծոյ, ի հայլ յշապետութեան սրբայն էջմիածնի՝ Տեառն Աստուածառոյ սրբազն կարողիկոսին Ամենայն Հայոց, ի պատրիարքութեան սրբոյն Երուսաղէմի՝ Տեառն Գրիգորի շնորհազարդ եպիսկոպոսի, ի նշշակատը մայրաքաղաքին Կոստանտինոպոլսի, հրամանաւ նորին առաջնորդի՝ Տեառն Յօհաննիսի աստուածաբան Վարդապետի: Տեսութիւն վասն հաւատոյ — Յառաջ քան զամենայն Հարկաւորութիւն պարտ է բրիստոնէին գիտել զհաւատն...

Աստվածատուր Համազանցի կաթողիկոսի օրոք (1715—1725) կատարված այն Հրատարակությունը, որից ընդօրինակված է այստեղ, մատենագիտական աղբյուրներում չի արձանագրված: Այդ մասին խոսվում է 1750 թ. Հրատարակության անվանաթերթում (տե՛ս «Հայ հնատիւպ գրքի մատենագիտական ցուցակ», Երևան, 1963, էջ 236, № 999):

2. 42ա-71ր [Այլ բնագրեր]

ա. 42ա—49ա Հարցմունք սրբոյն Բարսեղի Կեսարացոյ և պատասխանին եղրօն իւրոյ սրբոյն Գրիգորի — Բարսեղ ասէ. Ոչ էին երկինք և երկիր, աստուածութիւն ո՞յ վերայ կազմէր...

բ. 49ա-59ա Հարցմունք սրբոյն Գրիգորի կուսաւոշին և պատմելո [յ] նիշշտակին վասն հոգոց — Սուրբն Գրիգոր կուսաւորիչն Հայոց զքառասուն տիւ և բղրառասուն գիշեր Հաց ոչ եկեր...

գ. 59ր-70ր Տեսիլ սուրբ Աստուածածնին, զոր ետև ի լեառն Զիրենեաց — Խորհեցաւ ամենասրբուհի Աստուածածինն Մարիամ Երթալ ի լեառն Զիրենեաց՝ կալ յազօթս...

դ. 71ր [Անխոռագիր] — Ուրախ լեր, Գառին մայր և Հովհիսին մայր... Յունաց բառիցն թարգմանեալ է:

4

ԲԱՌԴԻՐԾ

(Պատմության բանգարան, № 693)

Նույնություն

1850—1853

Գրիշ և ստացող՝ Մելքոն Դպիր Տէր Մելքոնսէթեանց Աղուկեցի:

Թեր՝ 3 (Ա-9)+1 (Դ)+1-241+1 (Ե)+6 (Զ-ԺԱ), չզրված՝ Ա-9, Ե-ԺԱ (գրչափորձեր): Նյութ՝ թուղթ: Միծուրյուն՝ 17,5×10,5: Գրույրյուն՝ միասյուն: Գիր՝ շղաղիր: Տող՝ 40—50: Կազմ՝ սև կաշի, միջուկը՝ տախտակ, աստար՝ լուղթ:

Վիճակ՝ բավարար:

ԲԱՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1ա-241ա Տեսակ բառից ի գքարակ յաշխարհաբառ — Ա. միջարկութիւն, զարհուրանք: Վա՛լ, Վա՛լ, Ո՛չ, ո՛չ... Յորայ կամ ֆօքի (լատ.-յուն.): Որթ ծովային: Տե՛ս Փոկ: Վերջ:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԴՐՁՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Դա. ի 1850 ամից մինչև ց 1853 ամ սկայ գրել, բազում զանազան քառակի գծագրեցի և կատար հասուցի. գեղեցիկ ոճով գրարատէ թարգմանեցի աշխարհաբառ այլազգի բառիւր. Տիրացու Մելքոն դպիր Տէր Մելքիսեդեկն Ազուլեսցի Վանիան:

ՀԵՏԱԳՈՅՑԻ

Դր. ի գուանց Մելքոն Տէր Մելքիսեդեկնեցին: Դրեցաւ 1854 ամի ի 16 յուլիսի, ի պիտի նովրուզի: Այս թվականին եղե պատերազմ օսմանցւոց ընդ ուուսաց. վերնական խնամոցն պարտեցաւ օսմանն ընդդէմ ուուսաց. Գեղարքունիքի բնակիչ, Արծրունեաց արծիւ, հաստատ բազուկն մահուսի Մարզարէն, բայ հեղինան (sic) Դաւթի, կոտորեաց զբազում ջալալիսն և աղատեաց դժիւդն Ալիլզրլ. բան և երեք բրտի զլուխ կտրեաց և երեքն կենդանի բմբանեաց:

5

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀՆԱՏԻՉ ՇԱՐԱԿԱՆՈՅԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹՅԱՆ

(Պատմության բանգարան, № 438)

ԽՃԻԴ—1675

Գրիշ և վերանորոգող՝ Յարսեղ երեց: Ստացող՝ Սարդիս Ֆիլ.:

Թերք՝ 1: Նյուր՝ թուղթ: Մեծություն՝ 15,5×10: Գրություն՝ միասյուն: Գիր՝ բոլորդիր, համաշափի և դեղեցիկ:

Վիճակ՝ բարերար:

Մանոր. Գրված 1664(—1665)-ին Ամստերդամում Հրատարակված Շա-

րակնոցի 780-րդ աղատ էջի վրա:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹՅԱՆ

Էջ 780 Զվերչին նորոգել սուսող վարդափթիթ բուրաստանիս, որ կոչի Շարակնոց, հեղաճողի, բարեմիտ և աղքատասէր Սարգիս քահանայս, որ ետ կոտ նշուշտել և կրկին զարդարել վասն յիշատակ անշինչ լինելոյ հոգույ իւրոյ և ծնողացն, հօրն... (բաց) և մօրն... (բաց) և եղրօն՝ Յովսեփին և իւ-

րոց լորդուցն: Այլ և յիշեցէք զտէր Սարգիս, զնորարողրոց զորդիսն իւր՝ զներսէս և զՊօղոս դպիրն... (բաց): Այլ և յիշեցէք զտէր Սարգիսն և զկենա-

կիցն իւր՝ զԳուլազարն: Դարձեալ յիշեցէք զտէր Սարգիսն և զամենայն ա-

րեան մերձաւորաց. կենդանեացն՝ կիանք և առողջութիւն և խաղաղութիւն

խնդալ յԱստուծոյ, ննշեցելոցն՝ հանգիստ և ողորմութիւն [և] զերկնից ար-

քայութիւն: Յիշօղքն յիշեալ լիցին] ի Յիսուսէ Աստուծոյ մերոյ, որ է օրհ-

նեալ յաւիտեանս. ամէն:

Նորոգեցաւ Շարակնոցն ի թուականիս Հայոց Խճիդ (1675) ամին, յու-

նուար ամսոյ ին (25) օրն՝ ձեռամբ բազմամեղ և փծուն Բարսեղ իրիցու՝ որդի

Գրիգոր քահանայի[ի] և շնորհալից վարպետի, որ և յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս՝ յոյսն ամենեցուն:

Արդ, ով ոք հանդիպիք սմա, [լիշեց]էք զվերոյգրեալ տէր Սարգիսն և զամենայն արեանառու մերձաւորսն իւր և մեղաց թողութիւն խնդրել յԱստուծոյ: Ընդ նմին և զիս՝ զանարժան Բարսեղ գրիշս հանդերձ ծնողօք և ազգականաց մերաց թողութիւն խնդրել, և ձեզ մասն բարի լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերոք ամէն: Հայր մեր: